ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 441-Ա **15 օգոստոսի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 15-րդ և 20-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի N 874-Ա որոշումն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.2.-րդ կետի պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի մարտի 10-ի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին» N 43-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2.-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է՝ 3355720000 (երեք միլիարդ երեք հարյուր հիսունհինգ միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 335572 (երեք հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուներկու) հատ 10000 (տասը հազար) դրամ, անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկված բոլոր 335572 (երեք հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուներկու) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային»:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին:

15.08.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ